

# ՀԱՅՈՅ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

## ԸՍՏ ՄԱՐԶԻԿԱՆ

Հռոմէացոց Միհրդատի հետ կռած գաշինքը գոնէ արտաքուստ չէր վերաբերում Տիգրանին, իսկ Տիգրան հետզհետէ զօրանում էր և առաջ գալիս. նա վերջը խիստ սպառնական դիրք բռնեց հռոմէական տէրութեան նկատամամբ: Վերջինիս և Պանտոսի ու Հայաստանի թագաւորների մէջ եղած լարումը ոչ միայն չէր թուլանում, այլ և դնալով աւելի զօրեղանում էր: «Հայաստանի թագաւոր Տիգրանն անխնայ կերպով նուաճումներ էր անում: Պարսկեները, որոնց պետութիւնն արդէն քայքայուել էր այդ ժամանակ ներքին անկարդութիւնների պատճառով երկարաւու վէճերի համար: աւելի ու աւելի Ասխայի ներսերը մղուեցան: Հայաստանի, Միջագետքի և իրանի մէջ ընկած երկիրներից կորդուէնը (հիւսիսային Քիւրդիստան, Կորդուաց աշխարհ), Ատրոպատենական Մարաստանը պարսկեական իշխանութեան տակից երնելով դարձան, հայկական աւատական թագաւորութիւններ և նինուէի տէրութիւնը (Մօսուլ) գոնէ առ ժամանակ ստիպուած եղաւ Հայոց գերիշխան հովանաւորութեան տակ մտնել: Միջագետքում ևս, յատկապէս Մծբնի (Nisibis) մէջ և նրա շուրջը հայկական տիրապետութիւնն հաստատուեցաւ: Միայն ինչուէս երեւում է, հարաւային՝ մեծ մասամբ ամայի մասին չտիրեց այս նոր մեծ արքան և յատկապէս Տիգրիսի վրայ Սելևկեա քաղաքը նրան հպատակութիւն ցոյց չտուաւ: Եղեսիայի կամ Օօրօէնի (Osroene) իշխանութիւնը նա յաձնեց արաբական շրջմոլիկ ցեղերից մէկին, որ նա հարաւային Միջագետքից այստեղ բերաւ ու բնակեցրեց, որպէս զի այդ ցեղի միջոցով Եփրատի վրայով անց ու դարձն ու առետրական մեծ պողոտան ձեռք ձդիւ<sup>1)</sup>)

1) Եղեսիայի իշխանութիւնը, որի հետնարկութիւնն ըստ տեղական ժամանակակրութեան 134-ին է եղել, մի փոքր ժա-

«Սակայն Տիգրան շրաւականացաւ միայն Եփրատի առհելեան ափերը նուաճելով։ Այնից առաջ Կապադովիլիան էր նրա յարձակման նպատակակէտը։ և այդ անզէն ու անպաշտպան երկիրն իւր զօրեղ հարհանից աւերիչ հարուածներ ստացաւ։ Տիգրան խթց Կապադովիլիայից նրա արևելեան մասը՝ Մելիտինէն և միացրեց հանդիպակառ հայեաց հայկական Սովէն նահանգին, որով նա իւր ձեռքը ձգեց հայկական ու Փ. ասիական առևտրական մեծ պողոտան։ Սուլայի մահից յետոյ հայկական զօրքերը նոյն իսկ Կապադովիլիա մտան և նրա մայրաքաղաք Մաժաքի (յետագայում Կեսարիա) և այլ 11 յունական կաղմակերպուած քաղաքների ընտիխներին Հայաստան տեղափոխեցին։ Սելեկեան առրարուծուած թագաւորութիւնն էլ չկարողացաւ ընդգիւմութիւն ցոյց տալ Ասիայի այս նոր արքայից տրքային։ Այսուեղ՝ եղիպտական սահմանից հարաւ մինչև Ստրատոնի Աշտարակը (Կեսարիա) իշխում էր հրէական թագաւոր Աղէքսանդր Իաննէասը (Ιαννεας), որ իւր ասորի, արաբացի և եղիպտացի հարհանների ազատ քաղաքների հետ կռուելով, իւր իշխանութիւնը քայլ առ քայլ

մանակից յետոյ անցում է Աքամարի և Մաննայի Արարական հարսութեան ձեռքը, որոնց պատահում Ենք մենք յետագայում։ Այդ հանդամանքը պարզապէս կապ ունի այն բազմաթիւ առարների գաղթականութեան հետ, որոնց Տիգրան Մեծ ըերաւ և Եղեսիա, Կալլիքես (Καλλίκρεος) և Խառան քաղաքներում ընակեցրեց (Plin. h. n. 5, 20, 85, 21, 86-28, 142)։ Այդ մասին Պլուտարքոսն էլ պատմում է, որ Տիգրան վրանարնակ արարների ըարքերը փոխելով, իւր պետութեան մօտերքում ընակեցրեց՝ վաճառականութիւնը նոցա միջոցով զօրեղացնելու համար։ Թերևս այս պիտի հասկանալ այնպէս, որ ըեղուինները, որոնք սովոր էին իրանց շրջաններում առևտրական պողոտաներ ըանալու և դրանց վրայ շինուած մաքսատներում ապրանքներից մաքս առնելու (Ստրաբոն 14, 748), հայոց թագաւորին մի տեսակ մաքսաննպէի տեղ էին ծառայում և պարտական էին թէ իրանց և թէ նրա համար մաքս առնել Եփրատի վրայով անցնողներից։ Այս օսրօէնեան արաբները (Օրէ Արաբէ), ինչպէս կոչում է նոցա Plinius-ը, պէտք է որ նոյն այն արաբները լինին Ամանոս սարից իջած, որոնք նուաճուեցան Աֆրանիսով (Plut. Romp, 39)։

բնդարձակել ու ամրացրել էր։ Ասորիքի մեծամեծ քաղաքաները՝ Գաղա, Ստրատոնի Աշտարակը, Պտղոմիս, Բերէա փորձում էին իրանց անկախութիւնը պահել մերթ որպէս ազատ հաստրակութիւններ և մերթ այսպէս կոչուած ըլունաւորների (Tyrannes) իշխանութեան ենթարկուելով։ և ամենից շատ Անտիոք մայրաքաղաքն էր, որ համարեա ըօլորովին անկախ էր։ Դամասկոսն ու Լիբանանի հովիտները նուաճել էր Նաբատների իշխան Արետասը։ Վերջապէս Կիլիկիայում տիրապետում էին կամ ծովահէն աւազակները և կամ հռոմէացիք եւ ահա հազար պատառ եղած այս թագի համար Սելիկեան տան թագաժառանգներն ու իշխանները յամառաբար կոփու էին Տղում, կարծես նոքա ուզում էին թագաւորութիւնը ծաղը և ծանակի առարկայ գարձնել։ Ասորիքից, որ Լայոսի տան նման դատապարտուած էր յաւիտենական վէճերի և խառնակութիւնների, բաժանուում էին հէնց նրա սեփական հպատակները և նոյն իսկ պահանջներ էին անում ձեռք բերելու եղիպտական գահը, որ Աղէքսանդր Ա-ի անժառանդ մեաններով թափուր էր մնացել։ Ահա և դրա համար Տիգրան թագաւորը անխնայ նուաճումներ էր անում։ Արևելեան Կիլիկիան հեշտութեամբ հպատակուեցաւ նրան և Սոլ (Solei) քաղաքի բնակիչները Կապաղովիկեցոց նման Հայաստան բերուեցան։ Տիգրան տիրեց նոյնպէս զէնքի ուժով Ասորիքի վերին մասին (բացի Որոնտ գետի ափին շինած քաջ ընդդիմագրութիւն ցոյց տուող Սելիկիա քաղաքից) և Փիւնիկէի մեծագոյն մասին։ 74 թ. Հայերը գրաւեցին Պտղոմիս քաղաքը և արգէն հրէական տէրութեան լուրջ վտանդ էր սպառնում։ Սելիկեանց հին մայրաքաղաք Անտիոքը Տիգրանի արքայակայեաններից մէկն եղաւ։ Արգէն 83 թ։ Սուլլայի և Միհրգատի դաշնագրութեան հետեւեալ տարին, ասորական տարեգիրները Տիգրանին ներկայացնում են որպէս իրանց Երկրի տէր և Կիլիկիան ու Ասորիքը որպէս հայկական սատրապութիւններ արքայից արքայի կուսակալ Մագադատի (Magadates) իշխանութեան տակ։ Նինուէի Սաղմանասար և Սենեքե-

րիմ թագաւորների ժամանակը կարծես յետ էր դարձել Արևելքան բռնակալութիւնը (despotismus) նորից ծանրացաւ ծովափնեայ Ասորիքի առևտրական աղջարնակութեան վրայ, ինչպէս նրբեմն Տիւրոսի և Սիզոնի վրայ Ասիայի մեծ պետութիւնները նորից Միջերկրական ծովին հասան։ Կիլիկիոյ և Ասորիքի ծովափերում՝ նորից պատրաստ էր կէս միլիօն զօրքը Ինչպէս երբեմն Սաղմանասար և Նաբուգոդոնոսոր հրէաներին Բարելոն գերեզմանին, այնպէս էլ այժմ՝ նոր մեծ պետութեան բոլոր սահմաններից՝ Կորդովէնի, Ադիարէնի, Ասորեստանի, Կիլիկիոյ, Կապաղովիկիոյ բնակիչները յատկապէս յօւնական կամ կէս հելլենական քաղաքացիները ունեցած չունեցածով (եթէ թողնէին՝ յարքունիս կը գրաւուէր գոյքը) ստիպուած էին՝ տեղափոխուել նոր արքայական քաղաքը, որ մէկն էր այն հակայական քաղաքներից, որոնք աւելի շուտ աղջերի ոչնչութիւնն են ցոյց տալիս, քան իշխողի մեծութիւնը և որոնք Եփրատի կողմերում արքայական գահի խրաքանչիւր փոփոխութիւնից յետոյ նոր սուլթանի կարող հրամանի ներքոյ կարծես գետնից էին բռւանում։ «Տիգրանի քաղաքը» Տիգրանակերտը, որ հիմնուած էր Միջագետքի սահմաններում՝ Տիգրիսի աջ ափին և պէտք է Հայոց նոր ձեռք բերած երկիրների մայրաքաղաքը լինէր,<sup>1)</sup> Նինուէի և Բարելոնի պէս մի քաղաք դարձաւ, 50 կանգուն բարձրութիւն ունեցող պարիսպներով և սուլթանիզմի անբաժան ընկեր պալատով, պարտէզներով և զէնքի ու զորքի կայեաններով (parkanlage)։ Այս նոր արքայից արքան ուրիշ բաներում ևս չդաւաճանեց սուլթանական սովորութեան։ Ինչպէս որ ընդհանրապէս մանուկ արևելքում թագաւորները աղայական երևակայութեամբ միշտ պէտք է թագի գլուխ երեային, նոյնպէս էլ Տիգրան ըստ այդմ, հասարակութեան յայտնուելիս երեսում էր իւր նախորդների՝ Դարեհի և Քոերքսէսի պերճութեամբ ու փառահեղութեամբ։ Ճիրանի պարեգօ-

<sup>1)</sup> Այդ քաղաքը Դիարբէքերե մօտ չէր գտնուում, այլ Մջընի և Տիգրիսի մէջ, ոչ հեռու այս վերջինից։

տով, կէս սպիտակ կէս ծիրանի ներքնազգեստով, լայն  
եղբեայ սրնքազգեստով, բարձր դլխապատով (Turban-  
փաթթոց) և աշքայական ապարօշով. ուր էլ որ նա լինէր,  
թէ գնալիս և թէ կանգնելիս, նրան ծառայում էին և  
ուղեկցում սորկի նման չորս «ժագաւորներ»:<sup>1)</sup>

Այսպիսի շքեղութեան և փառքի հասած նոր արքա-  
յից արքան ի հարկէ ոչ մի պատճառ չունէր հռոմէացոց  
հետ կախ սկսելու, քանի որ «Հռոմի տռանց պատերազմի  
նրա ձեռն էր տալիս իւր բոլոր գաշնակիցներին»:<sup>2)</sup> Բայց  
միւս կողմից Տիգրանի նախկին գաշնակից Միհրդատը,  
որ առաջ Տիգրանից էլ աւելի ճշխութեան և շքեղութեան  
էր հասել, այժմ հռոմէացիներից սեղմուած, հնարներ էր  
փնտուում իւր պետութիւնը նորից ընդարձակելու և կոր-  
ցրած նահանգները կրկին գրաւելու: Նա իւր ուժերն հա-  
ւաքելով, նորից պատերազմ՝ է յայտարարում հռոմէա-  
ցոց 75-4 թ. ձմրանը նրա առաջին ջանքն է լինում այժմ  
նորից գաշն կռել Տիգրանի հետ. «բայց այդ անհեռա-  
տես մարդը մերժումէ իւր աներոջ առաջարկը»: Միհրդա-  
տին յաջողուում է մի զօրեղ բանակ կազմել կրկին և ար-  
շաւել արեմուտք՝ Փոքր Ասիոյ խորքերը, բայց հռոմէա-  
ցոց կուսակալ Լուկուլոսը նրան վերջնական կերպով  
յաղթահարում է կարէլլը<sup>3)</sup> քաղաքի մօտ և Միհրդատ  
կորցնելով իւր ամրոջ զօրութիւնը և հալածուելով Պոմ-  
պէոսից (որ այդ ժամանակ մի փոքրիկ վտշտի առաջնորդ  
էր), գալիս է Հայոց թագաւորի սահմաններն ապաւինում  
72 թուին» Արքայից արքայի երկրում նա ապաստան  
գտաւ, բայց միայն այդքան ձիչտ է, Տիգրան իւր փա-  
խստական աներոջ թագաւորական պատուով ընդունել  
տուաւ, սակայն նա մի անգամ էլ չկոչեց իւր պալատը,  
այլ պահեց նրան հեռաւոր սահմանային մի տեղում, որ-  
տեղ Միհրդատ մի տեսակ պատուաւոր բանտարկեալի  
կեանք էր վարում:<sup>4)</sup>

1) Տես III հատոր 48—51 եր.

2) Նոր Կեսարիա այժմ նեկսար. Ամասիայից ուղիղ արևելք:

Գ. Ա.

5) III 63.

Դրանից յետոյ հռոմէական զօրքերն հեղեղեցին Պահապական թագաւորութիւնը, որի տիրոջ, ինչպէս երեւմէ, գոնէ առ այժմ չէր ուղում Հայոց թագաւորը հայրենի դահի վրայ նոտեցներ Մինչև այժմ մի քանի անգամ երկուսաեք առիթ էր եղել Հռոմէացոց և Տիգրանի մէջ պատերազմ բացուելու, բայց թէ Տիգրան և թէ Տերակոյտը խոյս էին տուել, առաջինը՝ որովհետեւ կարիք չունէր գրան, զի առանց այդ էլ նա նուաճումներ էր անում, իսկ երկրորդը՝ որովհետեւ քաղաքականապէս նեղ դրութեան մէջ էր։ Սակայն քաջ և հայրենասէր Լուկուլլոս վճռեց, ինչ էլ որ լինի պատերազմ սկսել Հայոց թագաւորի դէմ և համարեա հակառակ ծերակոյտի, Տիգրանի մօտ Անտիոք մայրաքաղաքը մարդ ուղարկեց իւր ձեռքն յահճնելու Միհրդատ արքային. մանաւանդ որ Հայոց թագաւորն ահճնապէս վիրաւորել էր նրան իր՝ նրան գրած թղթում տիտղոսը բաց թողնելով<sup>1)</sup>։ Տիգրանից Պահապացոց թագաւորին ուղելով, Լուկուլլոս միևնոյն ժամանակ պատերազմի շարժառիթ էր մէջ բերում. և որովհետեւ Հայոց թագաւորը մերժեց, ուստի Լուկուլլոս իւր ձեռքի տակ եղած սակաւաթիւ, բայց վարժ ու պատերազմների մէջ եփուած 2 լեգէոն կամ 15,000 զօրքով Եփրատն անցաւ, որով սկսուեցաւ Հայ-Հռոմէական պատերազմը 69 թ։

«Լուկուլլոս ուղղուեցաւ դէպի այն մեծ պողոտան, որ ձգւում էր Մծրինից հիւսիս և միացնում էր Հայոց նոր

1) Գաբագաշեան հին ու նոր պատմիչներից առնելով դըում է։ «Դիւրին է գուշակել զզարմանս Տիգրանայ, որ արքեան էր այնչափ յաջողութեամբ» ընդ պատգամաւորութիւն Նուկուզզեայ՝ տալ ի ձեռս զՄիհրդատ և ձաղանս։ Որ աւելի յանդկնութեան էր՝ զօրավարն ի նամակի գըէր. «առ Տիգրան արքայ» փոխանակ արքայից արքայի, որպէս սովոր էր նա տալ գըոշմել ի գահեկանս իւր. . . Տայր պատասխանի Տիգրան թէ առանց թեկն ինչ ածելոյ աներոյն իւրում՝ չկամէր աղարտել զանձին պատիւ, տալով զնա և ձեռս. և առ հատուցանելոյ գիտխարէնն թշնամանացն Նուկուզզեայ՝ չետ նմա և նամակին իւրում՝ դյորջորջանաց անունն «իմպերատոր»։ Գաբագ. Քն. պատմ. Ա. 140. Գ. Ա.

շինած մայրաքաղաք Տիգրանակերտը<sup>1)</sup> հին մայրաքաղաք Արտաշատի հետ Արքայից արքան Տիգրանակերտումն էր և քիչ առաջ վերադարձել էր Ասորէքից՝ առաջուց ինկատի ունենալով հռոմէացոց հետ հետզհետէ բարդուող խնդիրները՝ աշխարհակալ ծրագիրները Միջերկրական ծռվի նկատմամբ յետաձգելով։ Նա հէնց նոր էր ծրագրում կելիկիտայից և Լիկանիայից յարձակուել հռոմէական մասի Փոքր Ասիսյ վայ և խորհում էր, թէ արդեօք հռոմէացիք խոկոյն կը թողնեն Ասիան, թէ գուցէ նախ քան այդ նոքա Եփեսոսի մօտ մի ճակատամարտ կը տան—որ յանկարծ իմացաւ Լուկուլլոսի յառաջխաղացութիւնը, որ սպառնում էր Տիգրանին Արտաշատի հետ յարաքերութիւնը խզելուն։ Բօթարերին նա դլխատել տուաւ, սակայն ծանր իրականութիւնը դրանով չփոխուեցաւ։ Նա թողեց իւր նոր մայրաքաղաքը և Հայաստանի ներսերը քաշուեցաւ, որպէս զի այնտեղ հռոմէացոց դէմ զինուի, մի բան, որ մինչեւ այժմ չէր արել։ Նոյն միջոցին Միտրոբարդանէսը պէտք է իւր մօտ եղած զօրքերի և հարեան բեդուին ցեղեցից շտապով կազմուած խմբերով զբաղեցնէր հռոմէացոց։ Ասկայն հռոմէական բանակի յառաջապահը ցրուեց Միտրոբարդանէսի զօրքը, իսկ Սեքստիլ զօրավարի խըսքակը ջարդեց արաբներին։ Լուկուլլոս դրաւեց Տիգրանակերտից Արտաշատ տանող ճանապարհը և հէնց այն պահուն, երբ հռոմէական մի զօրաբաժին Տիգրիսի աջ ափով հետեւում էր դէպի հիւսիս խուսափող արքայից արքային, Լուկուլլոսն ուղղակի ձախ դիմեց և հասաւ Տիգրանակերտի առաջ։ Նետերի այն անընդհատ տարափը, որով պահնակ զօրքը հանդիպեց հռոմէացոց, և պաշարման մեքենաների նեփակով այրումը հռոմէացոց համար իրանական պատերազմների նոր գժուարութիւններ առաջ բե-

1) Որ Տիգրանակերտը հաւանօքէն գանւում է Մարգինի (Mardin) կողմերում և Մծբինից հետու 2 անցքերի վրայ, ցոյց է տուել Sachau-ն (über die Lage von Tigranakerta, Abh. der Berl Akademie 1880) ուսումնասիրելով խնդիրը հէնց իւր տեղում, սակայն նրա սրոշած տեղը դեռ անկասկած չէ։

թին։ Քաղաքը պաշտպանում էր ամբոցապետ քաջ Մանսկոսը, մինչև որ վերջապէս լայնածաւալ պետութեան ամեն կողմերից և նրա սահմանակից՝ հայ զօրահաւաքներին մատչելի տեղերից արքայական պահեստի զօրեղ գընդեր հաւաքուեցան և հիւսիս արևելեան անցքերով մայրաքաղաքը փրկելու հասան։ Միհրգատեան պատերազմների մէջ փորձուած զօրավար Տաքսիլը խորհուրդ տուաւ ճակատամարտից խուսափել և հեծելազօր գնդով շրջապատել հռոմէական փոքրիկ խումբն ու սովամահ անել։ Մակայն երբ թագաւորը հռոմայեցի զօրապետին տեսաւ, որը վճռել էր առանց պաշտրումը վերցնելու ճակատ տալ մոտ 10,000 մարդով իրանից 20 անդամ զօրեղ թշնամու դէմ, և յանդուգն կերպով անցնում էր երկու բանակները բաժանող գետը, երբ նա մի կողմից շրջահայեց այդ փոքրիկ խումբը, որ «պատգամաւորութեան համար չափազանց բազմաթիւ էր և պատերազմի համար չափազանց քիչ», միւս կողմից իւր անհնարին (անթիւ) զօրակոյտը, որի մէջ իրար էին հանդիպում Աև ու Կասպից ծովերի ազգութիւնները և Միջերկրականի և Պարսից ծոցի ժողովուրդները, որի ահաւոր, երկաթապատ նիզակազէն հեծեաններն անդամ՝ բազմաթիւ էին Լուկուլլոսի ամբողջ զօրքից և որի մէջ պակաս չէր նաև հռոմէական ձեռվ զինուած հետեւակ զօրքը, — այն ժամանակ վճռեց նա անյապաղ թշնամու տենչացած ճակատն յօրինել։ Բայց մինչդեռ հայերը կռուի էին պատրաստում, Լուկուլլոսի որատես աչքը նկատեց, որ նոքա ուշացել են գրաւելու մի բարձրութիւն, որին պէտք է տիրէր նրա հեծելազօրը, Լուկուլլոսն շտապեց 2 վաշտով գրաւել այդ բարձրունքը, մինչդեռ նոյն միջոցին նրա թոյլ հեծելազօրը կողմնակի յարձակմամբ աշխատում էր թշնամու ուշագրութիւնը դարձնել այդ կէտից։ Հէնց որ զօրապետը բարձրունքին հասաւ, խոկոյն նա իւր փոքրիկ գունտը շուռ տուաւ ու թշնամու հեծելազօրի քամակն անց կացրեց։ Հեծելազօրն ամբողջապէս շփոթուեցաւ և ընկաւ դեռ կարդին չկազմակերպուած հետեւակազօրի վրայ, որը փախուստ

տուաւ առանց նոյն իսկ կռիւ սկսելու։ Յաղթողի բիւլետիւնը<sup>1)</sup>, թէ ընկան 100,000 հայ և 5 հոռմայեցի և թէ թագաւորը գլխապատն ու ապարօշը ծգած ծածուկ անս ճանաչելի կերպով սակաւաթիւ այլուծիով փախառեամբ ազատուել է—իր վարպետ Սուլլայի լակոնական ձեռվ կազմուեցաւ։ Յամենայն գէպս 69 թ. հոկտեմբերի 6-ին տարած յաղթութիւնը կը մնայ միշտ իրբեւ Հռոմի ուղամական պատմութեան մէջ ամենափայլուն աստղերից մէկը։

«Այդ յաղթութիւնը հետեանքներով որքան հաւրուստ, նոյնքան էլ փառաւոր էր։ Տիգրիսից հարաւ թիւներից և Ասորիքից խլած բոլոր երկիրները դրանով ուազմագիտօրէն (strategisch) դուրս եկան Հայոց տիրապետութիւնից և առանց այլհայլութեան յաղթողի ձեռքն անցան։ Առաջին օրինակն եղաւ հէնց նորահաստատ երկրորդ մայրաքաղաքը։ Նրա միջի բազմաթիւ յոյն բըռնուզբօսիկ գաղթականները բերդապահ՝ զօրքերի դէմ ելնելով, հոսմէացոց խմբերի առաջ բաց արին քաղաքի դըռները և Տիգրանակերտը թօզնուեցաւ զինուորների աւարառութեան։ Այդ քաղաքն հաստատուած էր նոր պետութեան համար և յաղթող բազկի մի զարկով կործանուեցաւ նրա հետ մէկ տեղ։ Հայոց ուստրապ Մագագաւը արգէն հաւաքել էր Կիլիկիայից և Ասորիքից բոլոր զօրքերը Տիգրանակերտն ազատող գնդին օգնելու։ Լուկուլոս դարձաւ Ասորիքի հիւսիսային մասը՝ Կօմմոգէնէ և յարձակմամբ առաւ Սամսուատ մայրաքաղաքը։ Նա չհասաւ բուն Ասորիքին, սակայն մինչև Կարմիր ծով տարածւող զանազան իշխանութիւններից և համայնքներից՝ յոյներից ասորիներից, հրէաններից, արաբներից—պատգամաւորներ եկան յաղթողին իրանց հպատակութիւնն յայտնելու և նրան գերիշխան ընդունելու։ Նոյն իսկ Տիգրանակերտից արևելք ընկնող Կորդուէնի իշխանն ևս հպատակուեցաւ նրան։ Սակայն Մծբինում, ուրեմն և Միջա-

1) Կատիներէն եռա խօսքի նուազականն է, որ նշանակում է տոմսակ։ Լուր, տեղեկութիւն միորեէ հետաքրքիր երոզութեան մասին։

գետքում գեռ կանդուն էր Հայոց արքայի եղբայր Դուռ-  
ուասի ոյժը Լուկուլլոս ամեն տեղ յայտնում էր որպէս  
պաշտպան հելլէն քաղաքացիութեան, Կոմմոդէնում նա  
իշխան կարգեց Սելևեան տնից Անտիոքոս անուն մէկին Ան-  
տիոքոս Աստիացուն, որ հայերի քաշուելուց յետոյ Ան-  
տիոք էր վերագարձել, Լուկուլլոսը Ասորիքի թագաւոր  
ճանաչեց, Բանի Տիգրանակերտ բերած գաղթականներին  
նա արձակեց իրանց բնակութեան տեղերը Աշքայից  
արքայի անհամար պաշարն ու գանձը-զարի վերցվին 30  
միլիոն միլիոն, միայն դուռ փող Տիգրանակերտի մէջ  
8000 տաղանդ՝ (12½ միլիոն տալեր) <sup>1)</sup> — հնարաւոր դար-  
ձրին Լուկուլլոսի համար պատերազմի ծախքը լցուցանել  
առանց պետութեան գանձարանից փող ուղելու և իր զին-  
ւորներից իւրաքանչյուրին, բացի ամենառատ պաշարից,  
տալ նաև իրքե պարգե 800 գենար (240 տալեր)։

«Հայոց արքայից արքան խիստ խոնարհեց, նա թոյլ  
բնաւորութեան տէր էր, ամբարտաւան՝ յաջողութեան  
մէջ, իսկ դժբախտութեան գէպքում հեշտութեամբ յու-  
սահատւող» <sup>2)</sup>

Անշուշտ Տիգրան կըշտապէր գաշն կտպել և հաշտու-  
թին առաջարկել հոսմէացի յաղթողին, եթէ որ զինէր  
խորամանկ և շահախնդիր Միհրդատը, որ 70 թ. աղա-  
տուելով իւր 20 ամեայ արգելումից, իւր թագաւորութեան  
սահմաններն էր գնացել, որպէս զի այնտեղից սպառնայ  
թշնամուն և այժմ ամեն ջանք գործ էր գնում, որ Հայոց  
թագաւորը չհաշտուի յաղթողի հետ, որից յետոյ արդէն  
իւր թագաւորութիւնը կրկին ձեռք բերելու յօյսը բոլո-  
րովին կանհետամար նրա համար, Աւստի նա խորհուրդ է  
տալիս Տիգրանին ինչ էլ որ լինի շարունակել պատերազմը  
և այդ փորձուած 60 ամեայ ծերունին, «որ համարեա հօր  
տեղ էր Հայոց արքայից արքայի համար և միջոց ունէր  
այժմ անձնապէս ազգել նրա վրայ, իւր եռանդով նուա-

<sup>1)</sup> Մէ տալերը մօտ 3 մարգ է. 150 կոպ.

<sup>2)</sup> III 68—71.

ճեց այդ թոյլ մարդուն և ոչ միայն պատերազմը շարօւնակելու տրամադրեց, այլ և իրան յանձնել պատերազմիքաղաքական և ռազմական վարումը։ Միհրդատի խորհրդով Տիգրան դիմում է պարթեաց Փրահատ (Phraates) թագաւորին գաշնադրութեան համար, սակայն ոտքաջ կշռելով իրերի վիճակը, լաւ է համարում հռոմէացոց հեռբարեկամ մնալ։ Այն ժամանակ 2 արքաները դիմում են մի այլ միջոցի՝ պատերազմին կրօնական ազդային բնաւորութիւն տալ՝ արեելքի յարձակումներից։ Եւ ահա այդ նպատակով ամեն կողմերից գալիս հասնում են անթիւ ու անհամար մարդիկ։ Միհրդատ աւելի ուշք էր գարձնում ասիական այրուձիու վրայ, մի մաս, որ անհամեմատ աւելի թոյլ էր հռոմէացոց մէջ։ Պատերազմի ասպարէզն որոշուեցաւ, որ Հայաստանը լինի, ուր գեռ ոտք չէին կոխել թշնամիք և որ «բնական յարմարութիւնների, ինչպէս նաև բնակիշների հայրենասիրութեան պատճառով շատ պատշաճ էր այդ տեսակ պատերազմավարական եղանակին»։

Լուկուլլոս, չնայած մի կողմից սենատի գժգոհութիւններին և միւս կողմից զօրքի ու զանազան զօրապետների տրտունջներին, իւր զօրքն առաջ տարաւ և «տեսնելով, որ Տիգրան ոչ պատրաստում էր հաշտութիւն առաջարկելու կամ, ինչպէս Լուկուլլոսն ուզում էր, ոչ էլ մի երկրորդ գլխաւոր ճակատ տալիս, որոշեց Տիգրանակերտից գժուարանցանելի լեռնային տեղերով մտնել արեելեան Եփրատի (կամ Արածանի, այժմ Մուրադ չայ) հռվիտը՝ Վանայ ծովի արեելեան ափերով. այդտեղից էլ անցնել Արաքսի գաշտավայրը, որտեղ Արարատի հիւսիսյին փեշերի վրայ բուն Հայաստանի մայրաքաղաք Արտաշատն էր շինուած արքայական ժառանգական պալատով ու հարսեմով հանդերձ։ Նա սպառնալով տոհմական թագաւորակայանին, յոյս ունէր Տիգրանին ստիպելու՝ ճակատ տալ կամ ճանապարհին կամ առ նուազն Արտաշատի առաջ։ և մի փոքրիկ վաշտ թողնելով, առաջ է շարժւում։ «Սակայն պատերազմական գործողութիւնների համար ամեն-

Նամեծ դժուարութիւն յարուցանողը Հայաստանի չոփաշ  
զանց կարճ ամառն էր։ Մովի մակերեսոյթից 5000 կամ  
աւելի բարձր ընկած հայկական բարձրաւանդակի վրայ  
Էրզրումի մօտ հացահատիկն ըստմում է միայն յունիսին,  
իսկ սեպտեմբերին հնձելիս ձմեռն արդէն վրայ է հառ  
նում։ Ամենաշատը 4 ամսուայ ընթացքում պէտք էր  
հասնել Սրտաշատին և վերջացնել պատերազմական ար-  
շաւանքը։

9. u.

(Gurmit Singh).